WIGMORE
WOMEN'S & CHILDREN'S
hospital with a heart

# ՄԱՆԿԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՄԵՐ ՄԱՍԻՆ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ի մանկաբուժական ծառայությունները ՀՀ Առողջապահության նախարարության կողմից ստացել են 3-րդ ամենաբարձր մակարդակ: Ժամանակակից բազմապրոֆիլ հիվանդանոցն առաջարկում է բարձր որակի շուրջօրյա բուժօգնություն հասանելի բոլոր երեխաների համար:

## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Մենք մատուցում ենք ընդհանուր և նեղ մասնագիտական մանկաբուժական հետևյալ ծառայությունները՝

- Ալերգոլոգիա
- Ակնաբուժություն
- Ատամնաբուժություն
- Գաստրոէնտերոլոգիա
- Գինեկոլոգիա
- Դիմածնոտային վիրաբուժություն
- Երիկամաբանություն
- Զարգացման մանկաբուժություն
- Ընդհանուր մանկաբուժություն
- Ընդհանուր վիրաբուժություն
- Թոքաբանություն
- Իմունիզացիա
- Լոգոպեդի ծառայություններ
- Հոգեբանի և հոգեբույժի ծառայություններ
- Մաշկաբանություն
- Միկրովիրաբուժություն
- Նեոնատալ ծառայություն
- Ներզատաբանություն
- Նյարդաբանություն
- Նյարդավիրաբուժություն
- Ուրոլոգիա
- Ռևմատոլոգիա
- Սրտաբանություն
- Վարակաբանություն
- Վերականգնողական բուժում
- Վերակենդանացում
- Վնասվածքաբանություն
- Քիթ-Կոկորդ-Ականջաբանություն
- Օրթոպեդիա

## ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հիմնվելով ապացուցահեն բժշկության, գերժամանակակից սարքավորումների և նորարար մոտեցումների վրա՝ մենք նոր նշաձող ենք սահմանում առողջապահության ոլորտում:

Հիվանդանոցն ունի՝

- Շուրջօրյա անհետաձգելի բուժօգնություն
- Մանրամասն նախագծված, բուժառուների կարիքներին հարմարեցված ենթակառուցվածք
- Գերհագեցած վերակենդանացման բաժանմունք, որտեղ երեխայի հետ միշտ կարող է մնալ մեկ խնամակալ
- 220 մահճակալ, օդորակման անհատական համակարգով, վարակի վերահսկման մեխանիզմներով և հատուկ երեխաների համար նախատեսված սարքավորումներով հարմարավետ հիվանդասենյակներ
- 8 վիրահատարան
- Սանավիացիայի ծառայություն, որն իրականացնում է ծանր և ծայրահեղ ծանր հիվանդների տեղափոխում մարզերից Երևան
- Լաբորատոր ախտորոշման շուրջօրյա ծառայություն
- Գործիքային հետազոտությունների ամբողջական ծավալ՝ համակարգչային շերտագրություն (ՀՇ), ուլտրաձայնային հետազոտություն, ռենտգեն, էլեկտրոէնցեֆալոգրաֆիա (ԷԷԳ), աուդիոմետրիա, ուրոֆլոմետրիա և այլն:

## ՊԵՏՊԱՏՎԵՐ

«Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ում հիվանդանոցային, ինչպես նաև արտահիվանդանոցային ծառայությունները հասանելի են ՀՀ քաղաքացի բոլոր փոքրիկների համար պետպատվերի շրջանակներում (առաջնային օղակից ուղեգրի առկայության դեպքում):

## ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑՈՒԹՅՈՒՆ

Կարևորելով շարունակական կրթությունն ու բարձր որակը՝ «Ուիգմոր կանանց և երեխաների հիվանդանոց»-ը համագործակցում է հայաստանյան և միջազգային բժշկական և կրթական տարբեր հաստատությունների հետ փորձի փոխանակման, նոր գիտելիքների ձեռքբերման և մասնագիտական աճի նպատակով: